

ԱՐԱՄ ԹՈՓՉՅԱՆ. Մովսես Խորենացու հունական աղբյուրների խնդիրը. «Սարգիս Խաչենց» հրատարակչություն, Երևան, 2001, 195 էջ:

Արամ Թոփչյանի մենագրության անհրաժեշտությունն ընդգծվում է Մովսես Խորենացու (Վր.) «Պատմություն Հայոց»-ում պարունակված աղբյուրագիտական արժեք ունեցող նյութերի և ղրանց սկզբնաղբյուրների թե՛ գիտական հավաստիության արժեքավորմամբ և թե՛ դրանց շուրջ ծավալված քննարկումներով:

Ա. Թոփչյանը իր աշխատության կենտրոնում դնում է Մովսես Խորենացու երկում «Հունական» աղբյուրների, այսինքն «Հունական երկերի» վկայակոչման հետազոտության խնդիրը: Նա անդրադարձել է առանցքային այն կարծիքներին, որոնք ազդել են խնդրո առարկա հեղինակներին՝ Բերոսոսի, Ալեքսանդր Բաղմավեպի, Աբիդենոսի, Կեփալիոնի, Հուլիոս Ափրիկանոսի և Փիրմիլիանոս եպիսկոպոսի՝ Մովսես Խորենացու վկայակոչումների առթիվ կատարված եզրակացությունների վրա:

Խոսելով Ա. Ֆոն Գուտշմիդի ազդեցության մասին, հեղինակը ընդգծում է, որ հետագա աշխատությունների համար նոր ուղիներ մատնանշելու հետ մեկտեղ նա, «իբր որոշ ծայրահեղություններով, հիմք դրեց Խորենացու գրքի գերքննադատությանը» (էջ 11): Սկսած Ա. Ֆոն Գուտշմիդից, Մովսես Խորենացու աղբյուրագիտական և ժամանակագրական տվյալներին «գերքննադատորեն» մոտեցող հետազոտողները իրենք թույլ են տալիս անճշտություններ և սխալներ: Ա. Թոփչյանը, որպես օրինակ, մատնանշում է այն խառնաշփոթը, որ Փիրմիլիանոսի երկի, որպես Մովսես Խորենացուն սկզբնաղբյուր ծառայած խնդրի շուրջ ստեղծվել է Ա. Ֆոն Գուտշմիդի և նրա տեսակետները ընդունած Գր. Խալաթյանցի մոտ, որոնք բացառել են Փիրմիլիանոսի «Պատմության» գոյությունը և օգտագործումը Պատմահոր կողմից, նրա վկայակոչումը բացատրելով եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցու պատմության» օգնությամբ:

Եվսեբիոսը Փիրմիլիանոսի մասին պատմելուց հետո սկսում է «Վասն Հայածանացն, որ եղեն յաւուրս Մաքսիմիոսի» վերնագրով գլուխը, ինչը, «ըստ Ֆոն Գուտշմիդի, Խորենացուն հիմք է տվել Հորինելու. թե Փիրմիլիանոսը գրել է եկեղեցու Հայածանքների պատմությունը»: Պատմահոր երկը նման մոտեցմամբ քննադատելը անհիմն է, քանզի, ինչպես նշում է Ա. Թոփչյանը, Ֆոն Գուտշմիդը շփոթել է այս կապակցությամբ հիշատակվող գեպեքերը և անձերը (էջ 12-13):

Մովսես Խորենացու աղբյուրներից օգտվելու մեթոդների լուսաբանման և առհասարակ «Հայոց պատմության» աղբյուրագիտական քննության ընագավառում Ա. Թոփչյանը բարձր է գնահատում Գագիկ Սարգսյանի ավանդը, կարևորելով նրա դիտողությունները Խորենացու աղբյուրների ուսումնասիրման անհրաժեշտության առումով: Գ. Սարգսյանի աշխատությունների հետ մեկտեղ անդրադառնալով դրանց նախորդած «բեկումնային նշանակություն ունեցող ելույթներին» (Ֆ. Կոնիբեբ, Մ. Աբեղյան, Ստ. Մալխասյանց), որոնցում ցույց էր տրված զուտ ժխտողական մոտեցման անհեռանկարայնությունը», հեղինակը սպասելի էր համարում նման բնույթի հետագա փորձերի կանխումը: Սակայն 1978թ. լույս տեսած Խորենացու «Պատմության» անգլերեն թարգմանության առաջաբանում և ծանոթագրություններում Ռոբերտ Թոմսոնը, ինչպես նշում է Ա. Թոփչյանը, «գժքախտաբար... իր հաղուստ գիտելիքներն ու բանասիրական ակնառու հմտությունները ծառայեցրել է՝ Ֆոն Գուտշմիդի, Կարիբի ու Խալաթյանցի... Թոմսոնի օրոք արդեն ակնհայտորեն արդիականությունը և կորցրած տեսակետների վերականգնումը և լրացուցիչ փաստարկներով ամրապնդմանը» (էջ 19):

Ա. Թոփչյանը նորագույն շրջանի ուսումնասիրություններից Հիշատակման արժանի է համարում Ջուստո Տրայինայի փորձը՝ ինքնացու գիրքը կապելու անտիկ պատմագրության ավանդույթների հետ, ինչպես նաև Ալբերտ Մուլչեղյանի պատմաբանասիրական հետազոտությունները, որոնք նա համարել է նոր և ուսանելի խոսք խորհրդանշագիտության մեջ (էջ 20-21):

Մենագրության առաջին գլխում Ա. Թոփչյանը նոր մոտեցմամբ, հնարավորին չափ հանգամանորեն հետազոտում է հունալեզու չորս պատմագիրների՝ Բերոսոսի, Ալբերտոսի Բագմավեպի, Աբիդենոսի և Կեփալիոնի վկայակոչումը Մովսես ինքնացու «Հայոց պատմության» մեջ: Հեղինակը սխալ է համարում այն կարծիքը, թե այս չորս հեղինակների անունները վերցված են Եվսեբիոսի «Ժամանակագրությունից»: Նման մոտեցման անճշտության պատճառը նա համարում է այն, որ նրանք դիտվում են իրարից անբաժան, որպես մեկ ամբողջություն, կապվելով նույն սկզբնաղբյուրի Եվսեբիոսի «Ժամանակագրության» հետ, մինչդեռ նրանցից յուրաքանչյուրի վկայակոչումը ինքնացու մոտ ուղեկցվում է մյուսներից տարբեր հանգամանքներով (էջ 23-28):

Հին հունարեն լեզվին տիրապետելը նպաստել է աղբյուրագիտական կարևորագույն եզրահանգումների մենագրությունում պահպանելով ուսումնասիրության դասական ոճը: Այսպես, օրինակ, հեղինակը, հենվելով բյուզանդական ժամանակագիր Գեորգիոս Սինկելլոսի (VIII-IX դդ.) շնորհիվ նաև հունարեն պահպանված Եվսեբիոսի «Ժամանակագրության» Բերոսոսի մասին պատմող հատվածներից մեկի վրա, համեմատություն է կատարում Հայերեն թարգմանության հետ և ապացուցում, որ հունարեն հատվածներն այն մասին, թե «չատ հեղինակների երկեր, որ ընդգրկում էին տասնհինգ բյուր տարվա ժամանակաշրջան, պահպանում էին Բաբելոնում», հավանաբար Հայերեն սխալ թարգմանության (իրևել թե Բերոսոսն ինքն էր դրել այն «չատների գրվածքները»), «Համապատասխանում են ինքնացու տեղեկությանը»՝ Բաբելոնում, Բերոսոսի տրամադրության տակ

եղած մի «թագավորական» կամ «մեհենական» դիվանի մասին, որտեղ նա գտել է «չատերի գրվածքները»: Ավելին, Մովսես ինքնացուի գիտի նաև, որ Բերոսոսն մի հույն թագավոր (ըստ Ա. Թոփչյանի՝ Անտիոքոս Սոտերը) հորդորել է Բաբելոնում պահվող քաղաքներն այսօր թարգմանել կամ վերաշարադրել հունարեն: Այն, որ այս տեղեկությունը բացակայում է Եվսեբիոսի երկում, հետազոտողին հիմք է տվել մերժելու վերոհիշյալ ընդունված կարծիքը (էջ 33):

Նման տրամաբանված մանրակրկիտությամբ աչքի է ընկնում Պտղոմեոս Փիլադելփոսի նախաձեռնած թարգմանությունների անհավոգ ավանդության մասին Պամասոսը հաղորդման համեմատությունը Փիլոն Եբրայացու և Գեորգիոս Սինկելլոսի հունարեն բնագրերի հետ: Ա. Թոփչյանը եզրակացնում է, որ անտիկ աշխարհում բավականին տարածված էր նշված թարգմանությունների անհավոգ ավանդությունը, մասնավորապես՝ կապված Հին Կտակարանի թարգմանության հետ, և ինքնացու այն կարող էր հասնել բանավոր կամ գրավոր ճանապարհով: Նշելով, որ ինքնացու, ինչպես ինքն է ասում, հավաստի իմացել է այն անձանց անունները, որոնք ձեռնարկել էին այլալեզու դիտական ու զբաղմունքները «արվեստները» իրենց ժողովուրդներին հունարեն մատուցելու գործը, Ա. Թոփչյանը «Հայոց պատմության» հանելուկային տեղերից մեկը՝ «որպես զԱ[ստեղաբաշխութիւն] առ Ք[աղղէացիս] և զԵ[րկրաչափութիւն] առ Ե[գիպտացիս] և զԹ[ուրաքանութիւն] առ Փ[իլիսթիցիս] և զԵ[րաժշտութիւն] առ Թ[րակացիս]» համարել է հունական ավանդությունների վերարտադրություն, որը նման է Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» համապատասխան հատվածին: Չհամաձայնելով այն բանասերների հետ, որոնք ուղղակի կապ են տեսել այդ երկու տեքստերի միջև, Ա. Թոփչյանը գտնում է, որ խոսքը կարող է լինել միևնույն ավանդույթի տարբեր արտահայտումների մասին: Այս առնչությամբ նա հիշատակում է նաև այլ հեղինակների՝ Թամիրիսի, Դիոդորոս Սիկիլացուն, Դիոգենես Լաերտցուն, Պոփյու-

րոխսին, որոնք նույնպես խոսում են այդ «արվեստների» և տվյալ ժողովուրդների առնչության մասին: Այս ամենից Ա. Թոփչյանը եզրակացրել է, որ խնդրո առարկա՝ խիստ «հունաշունչ» հատվածն ընդհանուր բովանդակությանը չի կապվում Եվսեբիոսի դրվածքի հետ (էջ 39–41):

Եթե Գր. Խալաթյանը «Խորենացու Հնարանքների խիստ բնորոշ» է համարել այն փաստը, որ լայնորեն օգտվելով «Ժամանակագրությունից», նա ոչ մի անգամ այն չի հիշատակել, ապա Ռ.Թոմասոն, ընդհանրապես խախտելով գիտական քննարկումների էթիկան, կտրուկ արտահայտվել է. «Ժամանակագրություն» հայերեն թարգմանությունը լայնորեն գրագողության է ենթարկվել Մովսեսի կողմից»: Այս կարծիքի անհիմն լինելը Ա. Թոփչյանը հաստատում է հունահռոմեական հեղինակներից բերված օրինակներով, քանի որ «նրանք հաճախ էին լուծվում պահպանում իրենց տեղեկություններ մատակարարած աղբյուրների մասին, և դա սովորական վարմունք էր ու անբնական չէր համարվում» (էջ 42):

Հին հեղինակների մոտ նաբուրդոնսորի մասին շարադրանքի հեղինակի անունը նշված է Մեգասթենես, որը Եվսեբիոսի «Ժամանակագրության» հայերեն թարգմանությունում և Խորենացու մոտ՝ Աբիդենոսի վկայակոչման կապակցությանը, ըստ Ա. Թոփչյանի, թյուրիմացաբար «Մեծագործ» է թարգմանված և վերադրված է նաբուրդոնսորին, ինչը նա չի բացառել մեկ ուրիշ աղբյուրից եկող սխալի հետևանք, «որտեղից այն մտել է Խորենացու գրքի և ապա, վերջինիս ազդեցությանը, «Ժամանակագրության» մեջ» (էջ 45–51):

Ա. Թոփչյանը դժվար բացատրելի է համարում Աբիդենոսի վկայակոչումը յոթ աուրեստանյան նահապետների և յոթ հայ նահապետների ցանկի մասին. «Նոյնպէս և զմերն՝ ի Հայկայ մինչև ցԱրայն գեղեցիկ, զոր Եսպան կաթոտն Շամիրամ թուէ այսպէս. Արայն գեղեցիկ՝ Արամայ, Հարմայ, Գեղամայ, Ամասեայ, Արամայիսայ, Արամանեկայ, Հայկայ, որ եղև հակառակ Բելայ»: Եթե ասորեստանյան նահապետների ցուցակը առկա է «Ժամանակագրության»

մեջ, ապա հայ նահապետների ցանկը Եվսեբիոսի գրքում զուգահեռ չունի: Ըստ Ա. Ֆոն Գուտշմիդի և Մ. էմինի, այս քաղվածքը չկար Աբիդենոսի մոտ: Գր. Խալաթյանը եզրակացրել է, որ Խորենացին «ցանկացել է օգտվել Աբիդենոսի հեղինակությունից, որպեսզի իր պատմության մեջ խցկի իր իսկ կազմած առաջին հայ նահապետների ցանկը, որն, իհարկե, Աբիդենոսին երբեք հայտնի չէր»: Ռ. Թոմասոն կրկին Մովսես Խորենացու բոլոր «գերբնադատներից» առաջ անցնելով, գրել է, որ այդ հատվածն այն «գեղեցիկ է», երբ «Մովսեսը կեղծել է իր աղբյուրը... Ցանկն Աբիդենոսից կամ Եվսեբիոսից չէ, այլ Մովսեսն այս հեղինակավոր աղբյուրներին է վերադրում հայկական ավանդությունը»: Ա. Թոփչյանը իրավացիորեն նշում է, որ Խորենացին Եվսեբիոսին որևէ բան չի վերագրել, ավելին, Աբիդենոսի «գրվածքն ամբողջությամբ մեզ չի հասել, և կցկտուր հատվածների հիման վրա արված որևէ կատեգորիկ եզրակացություն չի կարող համոզիչ լինել... Մար Աբասի մատյանում եղել է մեջբերում Աբիդենոսի «ազգաբանություններից», որտեղից և Խորենացին վերցրել է հայ նահապետների ցանկը» (էջ 54–60): Ջ. Տրայինան նույնպես գտնում է, որ Աբիդենոսը կարող էր խոսել Արայի մասին: Ա. Թոփչյանը, նշելով այն փաստը, որ Պլատոնն իր «Պետության» մեջ պատմում է «Արամենոսի որդի էրոսի» մասին և, դրելով, որ «Պլատոնի էրոսը նույնացվում է Արայի հետ», բավարարվում է միայն Ջ. Ռասսելի կարծիքով և նրա խիստ կասկածելի ու անհիմն ենթադրություններ, իբրև թե «Պլատոնին, հավանաբար որևէ «Հայկական զրադաշտական աղբյուրից» (ուղղակիորեն կամ անուղղակիորեն), հասել է Արա Գեղեցիկի մասին լեգենդի մի «իրանականացված» տարբերակ» (էջ 55):

Ժամանակին Գր. Ղափանցյանն իր «Արա Գեղեցիկի պաշտամունքը» աշխատության մեջ արդեն խոսել էր Արայի հետ Պլատոնի հիշատակած էր-ի նույնացման մասին<sup>1</sup>, ուստի այստեղ անհրաժեշտ էր Գր. Ղափանցյանի աշխատության հիշատակու-

<sup>1</sup> Գր. Ղափանցյան. Արա Գեղեցիկի պաշտամունքը. Երևան, 1945, էջ 70–73:

մը, քան առանց քննարկման, գոյություն չունեցած «Հայկական զրագաշտական աղբյուրից» քաղված լեզենդի «իրանականացված» տարբերակի մասին գրելը:

Ուշագրավ և տեղին է Ա. Թոփչյանի մատենաշումը, որ խորենացու հիշատակած «Բերոսեանն Սիբիլայ»-ի վերաբերյալ Ռ. Թոմսոնը «տարօրինակ կարծիք է հայտնում», իբրև թե «Մովսեսը «Սիբիլյան պատգամախոսություններից» մի քաղվածք վերադրում է Բերոսոսին», այնինչ, ինչպես թարգմանել են Ա. և Փ.-Պ. Մահենները, այդ նշանակում է «Բերոսոսի դուստր Սիբիլա» (էջ 56-57): «Ազգաբանական» ցանկեր ներկայացնելը, առասպելականի ու իրականի միաձուլումը, ըստ մենագրության հեղինակի, առհասարակ հատուկ էին խնդրո առարկա բոլոր չորս հեղինակներին՝ Բերոսոս, Ալեքսանդր Բազմավեպ, Աբիդենոս, Կեփալիոն (էջ 63): Ուստի, ինչպես եզրակացնում է Ա. Թոփչյանը, «մնում է առանց կասկածի ընդունել «Հունական միջավայրից խորենացուն բնագրով կամ թարգմանաբար հասած այն անհայտ աղբյուրի (աղբյուրներ), և կամ նրա ձեռքի տակ խնդրո առարկա անտիկ հեղինակների բուն երկերի (Հավանորեն Հատվածաբար) գոյությունը, որի (որոնց) նյութը նա իր «Պատմության» սկզբնական գլուխներում օգտագործել է՝ եվսեբիոսի «Ժամանակագրությունից» առանձին տվյալներ քաղելու հետ միաժամանակ» (էջ 83-84):

Իր աշխատության երկրորդ գլխում Ա. Թոփչյանը ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ Սեքստոս Հուլիոս Ափրիկանոսի (II-III դդ.) «Ժամանակագրությունը» Մովսես խորենացու հիշատակած այն աղբյուրներից է, որոնց առիթով նա առավել շատ է քննադատվել: Այս կասկածները թանկանկարի վ. Լանգլուայի, Ա. Ֆոն Գուտշմիդի, Զ. Գելցերի, Ա. Գարագաշյանի, Օ. Կարիերի մերժողական կարծիքները, Ա. Թոփչյանը նշում է Ա. Բաուսգարտների փորձը, որը ջանում էր ապացուցել, թե խորենացին ծանոթ է եղել Ափրիկանոսի երկին: Սակայն «գերբնադատություն» ժխտի մեջ այս փորձը Գր.-նալաթյանցի անհաջող համարեց և փորձեց ամփոփել նախորդ քննադատական ելույթ-

ները: Ա. Թոփչյանի կարծիքով, Գր. նալաթյանցը, համարելով, որ Ափրիկանոսի մասին չէր կարող վկայել իրենից 200 տարի առաջ ապրած Հովսեպոսը, ճիշտ չի հասկացել խորենացու խոսքը «Ափրիկանոսի ժամանակագրի, որում վկայ է Յովսեպոս», քանզի իրականում Պատմահայրը նկատի ունի, որ Ափրիկանոսի պատմածը հաստատվում է Հովսեպոսի տեղեկություններով: Ա. Թոփչյանն ավելացնում է. «Խորենացու նույն խոսքերն ուրիշ տեսանկյունից, բայց դարձյալ ոչ ճիշտ է մեկնաբանում Ռ. Թոմսոնը», քանզի Պատմահայրը «նկատի ունի, որ առհասարակ Ափրիկանոսի տվյալների վերաբերյալ վկայություններ ունեն նաև Հովսեպոսը և ուրիշ Հուլյան հեղինակներ» (էջ 90-91):

Ա. Թոփչյանը նշում է, որ Գր. նալաթյանցը սխալվել է դրելով, որ իբրև թե, խորենացու շարագրանքից հետևում է, որ Եվսեբիոսի «Եկեղեցու պատմության» մեջ հիշատակվում է Ափրիկանոսը, և որ Եվսեբիոսն է վկայում, թե նա, Եղեսիայի զիվանից օգտվելով, պատմել է Հայ առաջին թագավորների գործերի մասին: Իրականում, ինչպես ճիշտ մեկնում է Ա. Թոփչյանը, խորենացին Եվսեբիոսի «Եկեղեցու պատմությունը» վկայակոչում է միայն հաստատելու համար Եղեսիայի զիվանում Հայ առաջին թագավորների գործունեության վերաբերյալ տվյալների գոյությունը, իսկ Եվսեբիոսի կողմից Ափրիկանոսի հիշատակման մասին խոսք չկա: Մեջբերելով «Եկեղեցու պատմության» համապատասխան հատվածը («...էր դրեալ ի նոսա ամենայն ինչ որ միանգամ գործեցաւ յառաջնոց անտի մինչև ցԱբգար»), Ա. Թոփչյանը նշում է. «Եղեսիան Հայկական քաղաք և Արգարին Հայ թագավոր համարելու ավանդույթը տարածված է եղել խորենացուց առաջ: Ի դեպ, Աբգարի և նրանից սկիզբ առած դինաստիայի Հայկական ժագման մասին վկայում են նաև ուրիշ աղբյուրներ» (էջ 92):

Մովսես խորենացին Աբգարյանների արքայատոհմի պատմությունը ներկայացրել է որպես Հայ ժողովրդի պատմության անբաժանելի մաս, և հենց Ա. Թոփչյանի վկայակոչած Անանուն Եղեսացու «Ժամանակագրությունը», այսինքն օտար սկզբն-

աղբյուրը ևս, ապացուցելով ՊատմաՆոր Հաղորդումը, տեղեկությունն է պարունակում Հայկական արքայատոհմի՝ Ուռհա-Եղեսիայում ժառանգաբար թագավորելու մասին: Այնպես, ինչպես Կոմագենեն էր ժամանակին մաս կազմել Հայոց թագավորության, նմանապես եղել է նաև Արուստանի Հարեանությունը գտնվող Եղեսիայի կամ Ուռհայի թագավորությունը (ինչպես նշել է Հետազոտողը Տիգրան II Մեծի ժամանակաշրջանի առումով): Նորագույն Հետազոտությունները վկայում են Ագաբարյանների արքայատոհմի Հայկական ծագման մասին Մովսես Խորենացու և Անանուն Եղեսացու տեղեկությունների արժանահավատության և, հատկապես, I գ. Հայոց Հոգևոր և քաղաքական պատմության մեջ նրանց մեծ գերի մասին:

Ա. Թոփչյանը ցույց է տալիս Գր. Խալաթյանցի և նրան Հետևող Ռ. Թոմսոնի սխալ լինելը՝ Եղեսիայի դիվանի գոյության և նրանում պահվող Հայաստանին առնչվող նյութերի մասին Խորենացու տեղեկությանը անվստահությունն ցուցաբերելու առումով (էջ 93):

Ամփոփելով Ափրիկանոսի մասին ասվածը, Ա. Թոփչյանը նշում է, որ նրա «Ժամանակագրությունը» Մովսես Խորենացուն կարող էր սկզբնաղբյուր ծառայած լինել Արտաշես I-ի, Տիգրան II-ի և Արտավազգ II-ի մասին հատվածներում և չնայած Ափրիկանոսի «Ժամանակագրությունը» «բուն Հայաստանի և Հայերի մասին Խորենացուն շատ նյութ էի մատակարարել, այնուամենայնիվ եղել է նրա աղբյուրներից մեկը... և ճիշտ չէ այն կարծիքը, թե պատմիչն Ափրիկանոսի անվանը ծանոթ էր միայն Եվսեբիոսի միջոցով» (էջ 133):

Որոշ Հետազոտողների (Ա. Ֆոն Գուտշմիդտ, Գր. Խալաթյանց, Ռ. Թոմսոն) մոտ տարակուսանք է առաջացրել նաև Խորենացու կողմից Կապադովկյան Կեսարիայի եպիսկոպոս Փիրմիլիանոսի, որպես Հեղինակի, Հիշատակությունը: Այնինչ, ինչպես իր

մենագրության երրորդ գլխում նշում է Ա. Թոփչյանը, Մովսես Խորենացին Փիրմիլիանոսի «պատմությունից» այնպիսի տեղեկություններ է վերցրել. «որոնք կարող են հավաստի լինել ու արժեքավոր՝ Հայոց պատմության ուսումնասիրության համար» (էջ 158):

Այսպես, Ա. Թոփչյանը քայլ առ քայլ քննելով Մովսես Խորենացուն անհարկի քննադատողների տեսակետները, բազմաբնույթ աղբյուրագիտական հենքի վրա ցույց է տվել ՊատմաՆոր մոտեցումներն իր օգտագործած սկզբնաղբյուրների նկատմամբ և, դրանով իսկ, Մովսես Խորենացու երկի աղբյուրագիտական հենքի ճշմարիտ լինելը և պատմագիտական կարևորությունը: Հետազոտվող նյութի կապակցությամբ գիտական խորաթափանցությունն ցուցաբերելով, Հեղինակը եզրակացնում է, որ «նախ, անտեսելով «Հայոց պատմության»՝ իբրև պատմագրական աղբյուրի թերագնահատման հայտնի փորձերը, պետք է շարունակել» դրանում ստույգ տեղեկությունների որոնումը, «և երկրորդ՝ Խորենացու մյուս վիճելի աղբյուրների ուսումնասիրությունը պետք է իրագործել... ծայրահեղություններից վեր մոտեցմամբ և Խորենացու շարադրանքը կետ առ կետ, առնչվող նյութերի ողջ համատեքստում մանրամասնորեն դիտարկելու ձգտումով» (էջ 161):

Ա. Թոփչյանի աշխատությունը գիտական նորույթ և ներդրում է Հայագիտության կարևորագույն՝ խորենացիագիտության բնագավառում և նպաստում է պատմագիտական նշանակություն ունեցող մի շարք կարևոր հարցերի լուծումներին: Այս իմաստով մենագրությունն ամփոփում է Մովսես Խորենացու օգտագործած հունական աղբյուրների մասին պատմաբանասիրական դրականության մեջ քննարկված դիտելիքները և նոր հեռանկարներ բացում այս խնդրին նվիրված աղբյուրագիտական ուսումնասիրությունների համար:

ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ